



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 սեպտեմբերի 2022 թվականի N 1357 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1587-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և ուղեբեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգը հաստատելու մասին» N 1587-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) 17-րդ կետի 8-րդ ենթակետը և N 6 ձևի վերնագիրը «կազմակերպության» բառից հետո լրացնել «կամ անհատ ձեռնարկատիրոջ» բառերով.

2) 30-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«30. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տեխնիկական զննություն անցած չլինելու դեպքում տրանսպորտային միջոցն ստանում է «0» գնահատական և հանվում մրցույթից:».

3) 33-րդ կետը և 35-րդ կետի 2-րդ ենթակետը «կազմակերպությունը» բառից հետո լրացնել «անհատ ձեռնարկատերը» բառերով.

4) 40-րդ կետում «կազմակերպությունը» բառը փոխարինել «փոխադրողը» բառով.

5) 36.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«36.1. Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցը մրցույթի արդյունքների մասին ծանուցվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է վճարել «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական տուրք, հակառակ դեպքում երթուղու սպասարկման իրավունքն անցնում է տվյալ մրցույթում հաջորդ տեղն զբաղեցրած մասնակցին: Տվյալ մրցույթում հաջորդ տեղն զբաղեցրած մասնակցի բացակայության դեպքում կազմակերպվում է նոր մրցույթ:».

6) որոշման հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 36.3-րդ կետով.

«36.3. Մրցույթի հաղթող ճանաչված մասնակցի հետ ավտոբուսային կանոնավոր փոխադրումների իրականացման պայմանագրի կնքումից 5 աշխատանքային օրվա ընթացքում փոխադրողը Հայաստանի Հանրապետությունում ավտոկայարանային գործունեություն իրականացնող կազմակերպության հետ կնքում է ավտոկայարանային ծառայությունների մատուցման (սպասարկման) պայմանագիր:».

7) N 1 ձևի վերնագիրը և տեքստը, NN 2 և 3 ձևերի վերնագրերը, N 10 ձևի աղյուսակը «կազմակերպությունների» բառից հետո լրացնել «կամ անհատ ձեռնարկատերերի» բառերով.

8) N 3 ձևի աղյուսակի 3-րդ կետի 7-րդ և 8-րդ ենթակետերի «Ծանոթագրություն» սյունակում «նախկինում փոխադրող չհանդիսացող հայտատուն» բառերը փոխարինել «վերջին մեկ տարվա ընթացքում միջպետական կանոնավոր ուղևորափոխադրում չիրականացրած հայտատուն» բառերով.

9) N 9 ձևի վերնագրում «փոխադրող կազմակերպությունների» բառերը փոխարինել «փոխադրողների» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան